ՀԱՄՇԵՆԱՀԱՅԵՐԸ՝ ՈՐՊԵՍ ՀԱՅ ԷԹՆՈՍԻ ՀԱՎԱՍԱՐԱԶՈՐ ՄԱՍ

ՔՈՉԱՐ Ն. Հ., ՄԻՐԶՈՅԱՆ Ք. Պ.

Այսօր հայկական բազմաթիվ էթնոտարածքային խմբեր արդեն բավարար ուսումնասիրված են մարդաժառանգաբանական և պոպուլյացիոն ժառանգաբանության տարբեր բնագավառների ու մեթոդների կիրառման տեսանկյունից, սակայն համշենահայերը, որոնք մեր ժողովրդի ամենահետաքրքիր խմբերից են, հայտնի պատճառներով զուրկ են մնացել այդ կարևոր ասպարեզի լուսաբանումից: Մանավանդ որ նրանց մի ստվար մասը մահմեդականացված է և քաղաքական շահարկումների խաղաքարտ է դարձել: Շատ հեռավոր պատկերացումներ ունենալով մարդաբանական դասակարգումների մասին՝ թուրք «մարդաբանները», ինչպես, օրինակ՝ Սաքաօղլուն և Քըրզըօղլուն, համշենահայերին դասում են «օղուզական» կամ «թուրքմենական» ռասայական տիպին[1]: Ժամանակակից ռասայական դասակարգումների մեջ նման տիպեր գոյություն չունեն և չեն էլ եղել գիտության ավելի վաղ շրջաններում: Թուրքմեններն իրենք՝ որպես էթնոս, միատարր չեն: Նրանց մեջ հանդիպում են և՛ պամիրա-ֆերգանական, և՛ հնդմիջերկրածովյան, և՛ միջինասիական միջագետքի տիպերը, թուրքմենական որոշ խմբեր, ինչպես, օրինակ՝ չաուդըրներն ու յոմուդներն օժտված են վառ արտահայտված մոնղոլոիդ հատկանիշներով: Իսկ օղուզական տիպի մարդաբանությունը երբեք չի ճանաչվել որևէ մեծ ռասայական բնի համակարգում: Ըստ երևույթին, թուրք «գիտնականները» խառնում են լեզվական ընտանիքների ու խմբերի դասակարգումները ռասայական դասակարգումների հետ: Նման տիպի անհիմն ազդարարումները մեզ ստիպեցին նախաձեռնել Հայաստանի տարածքում բնակվող մի խումբ համշենահայերի ժառանգական հատկանիշների ուսումնասիրությունը: Հայկական մյուս էթնոտարածքային խմբերի հետ համեմատելու համար իրականացվեցին գլխի ու դեմքի չափագրումներ, ձեռնաթաթի մաշկի գծանախշանկարների ուսումնասիրություններ:

Հայ ժողովուրդը, մյուս բոլոր ժողովուրդների նման, իր հասարակական պատմության զարգացման ընթացքում ենթարկվել է նաև զուտ կենսաբանական էվոլյուցիոն գործոնների ազդեցությանը, որոնք, ի վերջո կազմավորել են նրա գենոֆոնդի ուրույն կառուցվածքը, ինչն արտաքնապես արտահայտվել է հայերի «արմենոիդ» մարդաբանական կերպարանքի մեջ: Ռասայական այս տիպին «արմենոիդ» անվանումն առաջին անգամ՝ 1911 թ., տվել է պրոֆ. ֆոն Լուշանը, որը կարծում էր, որ մարդաբանական բազում խնդիրների լուծման համար հույժ կարևոր են արմենոիդների զանգաբանական

[1] **Սահակյան Լ.,** *Օսմանյան կայսրությունում համշենահայերի բռնի մահմեդականացման քաղաքականության հետևանքները (Օսմանագիտության և թուրքագիտության հարցեր, Ե., 2007, էջ 210-211):*

նյութերի մանրազնին ուսումնասիրությունները: Նա շատ է գրել Առաջավոր Ասիայի տարածքում լայն տարածում գտած ռասայական հիշյալ տիպի յուրօրինակության և կազմավորման խոր հնության մասին[2]: Այդ տիպին են պատկանել հին շումերներն ու աքքադները, խեթերն ու խուռիները, հին ասորիներն ու հայերը, ինչն ապացուցված է տարբեր շրջաններից պեղված ոսկրանյութերի, ժայռապատկերների, սրբապատկերների, քանդակների և մշակութային այլ նմուշների միջոցով: Արմենոիդ տիպը կրող շատ հնադարյան ժողովուրդներ վերացել են պատմական բեմահարթակից, և ռասայական այս տիպի ուսումնասիրությունն այսօր հույժ կարևոր է թվում: Ինչպես գրել է ռուս մեծ գիտնական Վ. Բունակը՝ «…եվրոպական բրախիցեֆալիայի գենեզիսի լուսաբանումն անհնար է առանց «արմենոիդ» տիպի առաջացման պատմության հստակ պատկերացման… Այդ պատճառով ընդհանուր մարդաբանության մեջ հայերի մարդաբանական ուսումնասիրությունն արդեն վաղուց վերածվել է կենտրոնական նշանակություն ձեռք բերած հիմնահարցի»[3]:

Մարդաբանական բազմաձևության (պոլիմորֆիզմ) բոլոր բնագավառներում թե՛ հայ և թե՛ օտարազգի գիտնականների կողմից տարված աշխատանքները ցույց են տալիս, որ խոր հնություն ունեցող «արմենոիդ» ռասայական տիպն այսօր առավելագույնս ցայտուն արտահայտված է ժամանակակից հայ ժողովրդի ճնշող մեծամասնության մեջ: Դա նշանակում է, որ «արմենոիդ» ռասայական հատկանիշները, արտացոլելով ուրույն ժառանգական հենքը, հազարամյակների ընթացքում շարունակվել են սերունդների շղթայով: Ընդ որում, հայկական տարբեր էթնոտարածքային խմբերն իրենց ժառանգական կառուցվածքով չափազանց մոտ են իրար: Իսկ ժառանգական միակերպությունն իր հերթին խոսում է այն մասին, որ ամբողջական հայ ժողովրդի մեջ շատ մեծ է նախնիների գենային հավաքակազմի տոկոսը, տարբերակումներն աննշան դեր են խաղում, և գենոֆոնդի հետագա դրսևորումը բերելու է հայ ժողովրդի ժառանգական պատկերի է՛լ ավելի ընդհանրականութանը:

Համշենահայերին (թվով՝ 47) մյուս քսան հայկական խմբերի հետ համեմատելիս բացահայտվեց, որ ժամանակակից համշենահայերն իրենց ժառանգական համալիրով մտնում են հայկական ամբողջական էթնոսի միակերպության մեջ և կազմում են դրա հավասարազոր մասը: Իհարկե, նկատվում են որոշակի տարբերություններ դերմատոգլիֆիկ հատկանիշների մեջ, որոնք նրանց մի դեպքում մոտեցնում են հայաստանյան որոշ խմբերին, այլ դեպքերում՝ հեռացնում մյուս խմբերից: Օրինակ՝ համշենահայերն իրենց ժառանգա-

[2] **Loushan K.** *The Early Inhabitants of the Western Asia. S. Antrop. Inst., vol. 41, London, 1911, p. 221-244.*

[3] **Бунак В. В.** *Crania Armenica (Труды НИИ антропологии при МГУ, вып. II, М., 1927, с. 7-8).*

կան համալիրով ավելի մոտ են Ներքին Թալինի, Աշնակի, Սովետական (այժմ՝ Ալաշկերտ, գյուղ Արմավիրի մարզում), Տանձուտ և Ջանֆիդա բնակավայրերի հայերին և համեմատաբար հեռու՝ Խնձորեսկի, Վեդիի, Արարատի խմբերից[4]: Այդպիսի չնչին տարբերությունները բնորոշ են բոլոր հայկական ենթախմբերին կամ, այլ կերպ ասած՝ միկրոպոպուլյացիաներին, որովհետև ամեն մի առանձին խմբի մեջ ժամանակի ընթացքում գործել են որոշակի միկրոէվոլյուցիոն գործընթացներ:

Համշենահայերի պարագայում, որոնց պատմությունն առանձնանում է իր ուրույն փուլանիշերով, մենք գործ ունենք այնպիսի մի իզոլատի՝ մեկուսացած խմբի հետ, որը հարևան պոպուլյացիաներից դարերի ընթացքում մեկուսացած է եղել ոչ միայն պատմական ու սոցիալական, կրոնական ու հոգեբանական խոչընդոտների պատճառով՝ իր ինքնությունը պահպանելու և պատմական կայունությունն ապահովելու համար, այլև՝ ֆիզիկաաշխարհագրական ու ժողովրդագրական առումով, ինչը նպաստել է համշենցիների գենոֆոնդի բնորոշ հատկանիշների ձևավորմանը: Սահմանափակ են եղել միջպոպուլյացիոն ամուսնական կապերը, իսկ պանմիքսիան՝ ազատ խաչասերումը, իրագործվել է ներպոպուլյացիոն սահմաններում: Դրա հետևանքով կազմավորվել են ուրույն գենոֆոնդը և մարդաբանական հատկանիշների բնորոշ համալիրը: Հայտնի է, որ երկարատև մեկուսացման և ներպոպուլյացիոն ամուսնությունների հետևանքով գենոֆոնդի և մարդաբանական հատկանիշների հետ մեկտեղ ինտեգրվում են նաև էթնիկ առանձնահատկությունները՝ բարբառները, մշակութային ավանդույթները, հոգեբանական կարծրատիպը և էթնիկ ինքնագիտակցությունը[5]:

Մեր հաշվարկներն ու ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ հայկական էթնոտարածքային տարբեր խմբերում և հատկապես համշենցիների մեջ գերիշխում է արևմտահայկական ժառանգական համալիրը: Այդ համալիրն այսօր էլ գերակշռում է ոչ միայն համշենցիների, այլև Համշենից շատ հեռու բնակություն հաստատած հայկական խմբերում, ինչպես, օրինակ, Սևանի ավազանի մի շարք բնակավայրերում՝ Մարտունի, Գավառ, Կարմիր և այլն, քանի որ Հայաստանի բազմադարյան պատմությունը լի է ինչպես լայնարձակ տարածքների վերաբնակեցումների, այնպես էլ Առաջավոր Ասիայի և Կովկասի տարածքներում լայն տեղաշարժերի փաստերով: Իսկ այն հանգամանքը, որ համշենահայերն ամենամոտ ցուցանիշներն են ի հայտ բերում մյուս բոլոր և հատկապես արևմտահայկական արմատներ ունեցող խմբերի հետ, խոսում է այն մասին, որ հայկական բոլոր խմբերը շատ միատարր են իրենց ժառանգական համալիրներով, ինչն էլ իր հերթին ապացուցում է նախնիների գեների տոկոսային մեծ հարաբերության փաստը:

---

[4] **Кочар Н. Р.** *Антропология армян. Дерматоглифика и популяционная структура, Е., 1989, с. 103.*

[5] **Алексеев В. П.** *Историческая антропология и этногенез, М., 1989, с. 301.*

Մեր վերոնշյալ ուսումնասիրությունները վրաց հայտնի մարդաբան Մ. Աբդուշելիշվիլու՝ Գագրայի շրջանի համշենահայերին առնչվող հետազոտությունների հետ համեմատելիս՝ տեսնում ենք նույն միակերպությունը երկու խմբերի միջև և նմանությունը մնացալ հայկական խմբերի հետ: Այսպես, օրինակ՝ Գագրայի համշենցիների գլխի լայնական տրամագիծը հավասար է 158.2 մմ, իսկ Երևանի համշենցիներինը՝ 157.4: Երկայնական տրամագիծը առաջին դեպքում 184.6 է, իսկ երկրորդում՝ 183.8: Գլխի ցուցանիշը համապատասխանաբար՝ 85.3 և 85.1, ինչը ցույց է տալիս միայն հայերին բնորոշ խիստ արտահայտված բրախիցեֆալիան (կլորագլխությունը): Դեմքի բարձրությունը 123.3 և 122.8, քթի բարձրությունը՝ 56.7 և 54.7, լայնությունը՝ 36.2 և 36.9, քթի ցուցանիշը՝ 63.8 և 66.00 և այլն[6]:

Ամփոփելով վերը շարադրվածը՝ կարելի է եզրակացնել, որ Հայաստանին բաժին ընկած բոլոր դժբախտությունները միավորել են ժողովրդին և համախմբել նրա գենոֆոնդը: Ըստ երևույթին, հենց դա է հայ ժողովրդի կենսունակության մի ֆենոմենը, որի ժառանգական տարբերակումը խոչընդոտվում է գենային միգրացիաների կայունացնող ճնշման տակ, և չնայած հաճախ վերածվում է հոգեբանական ողբերգության, այնուամենայնիվ, հսկայական պոտենցիալ է ստեղծում պայքարի ու դիմակայության համար: Իսկ կենսաբանական տեսանկյունից ամրապնդվում է ժողովրդի կենսակայունությունը՝ ներդնելով նախնիների գեների զգալի տոկոսը և չեզոքացնելով հազարամյակների պատմության ընթացքում կուտակված ժառանգական բազմազանությունը:

Համշենահայերը, ինչպիսի էթնիկ ինքնագիտակցությամբ էլ օժտված լինեն այսօր, այնուամենայնիվ, կրում են նախնիների ընդհանուր գեների այն զգալի բաժինն ու հենքը, որը միավորում է ողջ հայկական էթնոսի տարբեր ենթախմբերը:

АМШЕНСКИЕ АРМЯНЕ КАК РАВНОЦЕННАЯ ЧАСТЬ АРМЯНСКОГО ЭТНОСА

КОЧАР Н. Г., МИРЗОЯН К. П.

Резюме

На протяжении последних десятилетий проводились многосторонние антропологические исследования всех этнотерриториальных групп армянского этноса. Однако амшенские армяне в силу определенных причин остались за рамками этих изысканий. Исследования показали, что амшенские армяне никак не отличаются от тотальной армянской популяции и антропологически близки к армянам – выходцам из Западной Армении.

[6] **Абдушелишвили М. Г.** *Антропология древнего и современного населения Армении (к этногенезу армянского народа), Тбилиси, 1987, с. 205-249.*